

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ Ս.ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԻԻ  
Տ.ՍԱՐԴԻՍ ՔՀՆՅ. ԳԱՇԸ ԳՐԵԱՆԻ / ՓԵՄՐ. 20 - ԴԵԿՈ. 31, 1963/

Սիրելի անդամներ,

Անցնող տասը ամիսներու, Փետր. 20 էն մինչեւ Դեկտ. 31, 1963, համեմտ զորքու-  
նէութեանս ամփոփ տեղեկագիրն է որ պիտի կարդամու հնչ որ ըրած եմ Առողութոյ վառքին,  
Եկեղեցոյ պայծառութեան եւ մեր սիրելի Հայ ժողովուրդին համար ըրած եմ:

#### Ս. ՊԱՏԱՐԱԳ

Անդրանիկ պատարագս մատուցի, որպէս այս եկեղեցւոյ Հովիւ, Փետր. 24, Սեծ Բարե-  
կենդանի Կիրակին: Անկէ ի վեր առանց բացառութեան ամէն Կիրակի Պատարագ մատուցած  
ենք Ս. Եկեղեցւոյս մէջ Երկու անգամ ես չկրօյ պատարագ մատուցանել, մին Սաբտ 3-ի  
Կիրակին, Թիվ ատել Ֆիա ընտանիքս փոխադրելու գացած էի. միևս անգամ, Սայիս 19-ին,  
Թրոյ նիւ Եորգ Պատպամատորական ժողովի առթիւ քատկուան ձրագալոյցին պատարագ ունե-  
ցած ենք: Եղած են Արեւադալի եւ Աւագ Շաբթուան արարողութիւններ. Հանգստեան եւ  
Խաղաղական ժամերգութիւն Ու ըրած երեկոյներ. Սիջինքի առթիւ Զորեքշաբթի երեկոյ:

Սիշտ քարոզ տուած թէ Հայերէն եւ թէ Անգլերէն լեզուներով:

ՄԱՍՆԱԿՈՐ Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստներ

Անմահ Ս. Պատարագ եւ Մասնակոր Հոգեհանգստեան պաշտօն կատարուած է,

Տ.Տ. Զարէն Ա. Սեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակալի,

Տ. Ղեւոնդ Արք. Դուրեանի, Թեմիս Նախկին Նահատակ առաջնորդին

Տ. Դերենիկ Եպս. Փոլատեանի

Նախագահ Ճան Ֆիթճերալտ Քէննիտիի

Ընդհանուր Հայ Նահատակաց եւ

Հ. Բ. Ը. Ս. Ննջեցեալ ~~Հայակական~~ անդամներուն

Հոգիներուն համար:

#### ԱՅՑԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ

Հոգեշշ. Տ. Խանակ ~~Հ. Ս.~~ Վրդ. Ղազարեան. Սեպտ. 1-ին, Տիրամայր Նուրիճա  
Գաշըգճեանի մահուան առթիւ, Ս. Պատարագ մատուցանելու եւ Հոգեհան-  
գստեան պաշտօն կատարելու:

Արժ. Տ. Միքայել Պիւթերօ. էյ. Սի. Վայ. Օի դասախոսութեան համար:

#### ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերոյիշեալ շրջանի մէջ կատարած եմ հետեւեալ ծիսակատարութիւնները:

9 Սկրտութիւններ:

2 Պսակադրութիւններ:

2 Թաղումներ: Ասկէ զատ Նակաթաք թաղումի մը մասնակցած եմ Տան  
կարգ եւ Ջոնասունքի առթիւ Գերեզմանօրհնէք կատարելով:

#### ԳԵՐԵԶՄԱՆՈՐՀՆԵՐ

Մեռելոց Թիշատակութեան օրուան առթիւ / Մէմորիալ Տէյիի, գերեզմանօրհնէք  
կատարած եմ Պրիճքութիւ Լէյքվիւ գերեզմանատունը Ընդհանութելով մեր Ծխականներու  
վահագին, մասնաւոր գերեզմանօրհնէք կատարած եմ չորս տարբեր առիթներով:

#### ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Այցելութիւններ տուած եմ մեր ժուխի սիրելի ժողովուրդին զանագան առիթ-  
ներով եւ ջանացած եմ միխթարել զանոնք եւ բաժնեկից ըլլալ անոնց ցաւերուն. Նաեւ  
մասնակցած եմ անոնց ուրախութեանց: Որպէս նոր եկած Հովիւ մը շատ պէտք ունէի  
առաջնորդող եւ ինչի ընկերակցող անձերու, որպէսզի զիս ծխականներու տանելով աւելի  
շուտ եւ աւելի շատ ծանօթութիւն հաստատէի մեր ժողովուրդին հետո:

Մի քանի ազնիւ անձերորոնք ուեէ պաշտօնական հանգանակ չունէին, ջանացին  
քիչ մը օգտակար ըլլալ: Այս մասին պիտի անդրադառնամ յետոյ:

## ՀՈՎԻԵԱԿԱՆ-ԱՅՋԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՍ ՀԵՏԵՎԵԱԼ ԿԵՐՊՈՎ ԴԱՍԱւՈՐԱԾ ԵՄՑ

Հիւանդանոց Հիւանդներու	61
Տունի Հիւանդներու	38
Մահերու առթիւ ցաւ ակցական	10
Տունօրհնէքի առթիւ	30
Զանազան առիթներով	208

Ընդհ. Այցելութիւններ 347

Երկու անգամներ այցելած եմ Նիւթառւնի Մտային Հիւանդանոցը եւ Երեք անգամներ Պրիճքութիւ Մերանոցը:

### ԱՅԼ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Հովուական այցելութիւններէս զատ այցելութիւններ տուած եմ զանազան հաստատութիւնները. Ներկայ եղած տարբեր ազգային եւ օտար ձեռնարկներուն Տունիս 4-ին, Փիֆֆիֆֆիֆֆիֆֆիֆֆիֆֆիֆֆի Սիլմըրտ, Քառւնսըլ Ավ Զըրչզի Ճաշ-Դասախոսուն - Տուլիս 19-ին, Խնթըրնէշնը հնսթիթիւտ, Թարգմանութեան համարէ Թեանչ Սեպտ. 3-ին, Հարթերտ, Գաղթային Գրասենեակ, Դպրապետ Ցակոք Գալ Ֆայեանի Թուղթերունչ Սեպտ. 16-ին Պրիճքութիւ, Քառւնսըլ Ավ Զըրչզի Տնօրինաց Ժողովին. Փակման աղօթքը ըրիչ Սեպտ. 22-ին Վ. Ա. ի դաժտահանդէսին: Ցաւուր պատշաճի կարճ պատգամ մը տուիչ Հոկտ. 27-ին, Նիւ Եորք, Առաջնորդարանի Երգահանդէսինչ Նոյմ. 8-ին, Նիւ Եորք, Առաջնորդարան Հայերէն դպրոցի դասագրքերը բերելուն Նոյմ. 10-ին, Պրիճքութիւ Հ. Բ. Ը. Սիրութեան ճաշկերոյթին. Նախազահելու եւ խօսելուն Դեկտ. 3-ին, Պրիճքութիւ, Խնթըրնէշնը հնսթիթիւտ, Թարգմանութիւն ընելուն Դեկտ. 20-ին, Սազոնիք Թէմբըլ, Ռէյ Զօթեանի, Սասթըր աստիճանի հաստատման հանդիսութեանց, Վերջին օրհնութիւնը տալու համարէ.

### ԺՈՂՈՎՆԵՐ

Ի պաշտօնէ Նախագահի հանգամանքովս, միշտ Ներկայ եղած եմ Հոգաբարձութեան, Տիկնաց Միութեան, Կիրակնօրեայ դպրոցի, Դպրաց Դասի եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդութեան կազմակերպութեան ժողովներուն, Երբ անոնք ուրիշ Եկեղեցական մէկ գործուչեն խաչաձեւածչ Համար եւ Հարկ եղած թէլ աղբութիւնները ըրած եմ որպէսզի անոնք Հայց. Եկեղեցիոյ կանոններուն Համաձայն ընթանան: Եւ սխալ մունքի մէջ չի յնանչ

### ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

Անցնող շրջանին մասնակցած եմ. Թեմական Պատգամաւորական Ժողովին, Թրոյ, Ն. Ե. Ամառնային, Եկեղեցականաց Համագումարին, Եկեղեցականաց Շրջանային Ժողովին Նւի Եորք. Էզպըրի ՅԲարքի Ս. Աստուածածնայ Եկեղեցին. Կիրակնօրեայ Դպրոցներու Տեսուչներու Շրջանային Ժողովին. Նիւ Եորք:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ Հովուական պաշտօնին սկսած օրէս, միակ ջանքն եղած է վերակազմել Եկեղեցւոյ զանազան գործոն մարմինները, որպէսզի այս փոքր սակայն Եկեղեցական համայնքը, իր Եկեղեցիով եւ Հոգեւոր կեանքով ծաղկի եւ զօրանայ:

Ուստի սկսանք աշխատանքի.

ՏԻԿՆԱՑ Միութեան.-

Անձնապէս դիմելով մեր կարգ մը ազնիւ տիկիններուն, Նշանակովի կազմեցի Տիկնաց վարչութիւն մը. Որոնք իրենց կարգին հրաւիրեցին Համայնքին տիկինները թէյասեղան ժողովի մը, Սայրերու Օրուան առթիւ եւ վերակազմուեցաւ Տիկնաց Միութեանը:

Տիկնաց Միութեանը մասնաւորապէս եւ անդամները ինդիանանապէս գնահատանքի արժանի են, վասնզի անոնք իրենց կարելին ըրին այս անցնող տարին աւելի արդիւնաւոր ընելու համար, սակայն շատ անգամներ պէտք եղած օգնութիւնը եւ քաջալերութիւնը չստուգան:

Աստուած վարձատրէ իրենց շանքերը եւ արդիւնաւոր ընէ անոնց աշխատանքները:

ԴՐԱՑ ԴԱՍ

Եկեղեցւոյ Երգեցիկ այս փոքր խումբը որ Մեծ գործ կը կատարէ Եկեղեցին Ներս Ներկային 13 անդամներ ունի, նաև ընտրուած վարչութիւն մը:

Սահմանադրության սամակներով՝ 25 անգեր-ժողովի հրատիկալով ներկաներուն մէջէն ընթրեցինք վարչութիւն մը որոնք սկսած դպրաց դասի գործերուն եւ փորձերուն ընթացք տալ : Ամէն Կիրակի եկեղեցի կուգան Կքերգեն, կը նուազեն եւ Սոնորանին կապասարկեն : Անոնց մատուցած ծառայութիւնը անգնահատելի եւ անփոխարինելի է. Աստուած օրէնք եւ երկնային բարիքներով վարձատրէ զիրենք :

#### ԿԻՍՍԱՐԿԱՒԱԳԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Այս ամառ, թամի Տապագեան, որ եկեղեցւոյս նուիրուած աշխատող երիտասարդ մըն է, իր փափաքով եւ մեր ջանքերով պատրաստուեցաւ կիսասարկաւագութեան. Հիմա արդէն Սոնորանին վրայ կ'երգէ եւ կ'սպասարկէ օրինակելի նուիրում մընոր կը յուսանք ու ըիշներու բարի նախանձը շարժելով ալ կ'ուզեն ծառայել Աստուածոյ եւ եկեղեցին ։ Միշտ պատրաստ ենք սորվեցնելու :

#### ՀԱՅԱՍՏԱՆԵԱԹԸ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Այս պարագային ալ անձնական նամակներով, երիտասարդ-երիտասարդուհիներ հրաւիրեցի ժողովի վնտրուեցաւ արժամեայ վարչութիւն մը եւ գործի սկսուեցաւ :

Ունեցան անդամական ժողով, ընտրեցին նոր վարչութիւնունին 16 անդամներ. Պունենան կանոնադր իրենց ամսական եւ վարչական ժողովները երեք դասախոսութիւններ կազմակերպած են. եւ ունին շինհիչ եւ եկեղեցին օգտակար ծրագիրներ այս նոր շրջանին համար :

Հպարտ ենք մեր նորակազմ էյ. Սի. Վայ. Օի անդամներով: Աստուած օրէնք զիրենք :

#### ՀԱՅ ԴՊՐՈՑ

Հայերէն լեզուի ուսուցումը կարեւոր նկատելով եւ Հայ դպրոց մը սկսելու նպատակով ջանացի խնամակալ մարմին մը կազմել եւ Հայերէն լեզուի դասաւանդութեանց սկսիլ ։ Հակառակ ջանքերուս չկրցայ Հինգ անձեր իրարու ընթել որպեսզի օգնեն ինձ դպրոցի գործերուն մէջ ։ Ստիպուած նոյմ. Յին սկսայ դասաւանդութեան էայ դպրոցի դասատուութիւնը եւ պատասխանութիւնը բոլորովին ձգուած է իմ վրաս :

17 արձանագրուած աշակերտներ ունինք. որոնց 3/4-ը դէ՛մ միշտ ներկայ եղած են :

Պէտք ունինք խնամակալ մարմնի մը եւ ուսուցիչներու :

#### ԿԻՐԱԿՆՈՐԵԱՑ ԴՊՐՈՑ

Ուրախ եմ ըսելու որ Կիրակնօրեայ դպրոցը, արդէն կազմակերպուած վիճակի մէջ էր երբ ես եկայ, եւ կ'դպրոցի տեսչուհի Տիկ. Թէրեցա Հարապետեանի եւ իր շուրջ հաւագուած ազնիւ եւ նուիրուած ուսուցչուհիներուն խոճամիտ եւ անխոնջ ջանքերուն հետեւանդով շատ լաւ եւ յուսդրիչ վիճակի մէջ է: Աշակերտութեան թիւը որոշապէս կ'աւելնայ: Հոգեւոր աշխատանքի արդիւնքը, թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս յոյժ գովելի է: Հոգեկան մեծ հաճոյք եւ զոհացում կ'զգամ անոնց հետ միասին, մեր փոքրիկներուն հոգեւոր դաստիարակութեան համար, ծրագիրներ պատրաստել եւ աշխատիլ ։

Թէ շնորհակալ եւ թէ ալ երախտապարտ ենք մեր եկեղեցւոյ համեստ եւ խոնարհ սրտով, կը խորհրդանք աշխատող մեր ուսուցչուհիներուն ենթային շնորհներ կը խնդրենք Աստուածմէ իրենց համար :

#### ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՈՐԾԵՐ

Բոլոր խորհրդականացութեանց արձանագրութիւնները, Սկրտութիւն, Ամուսնութիւն եւ Մահ, կանոնաւորաբար պահուած են մասնաւոր տոմարի մը մէջ նաև եկած թղթակցութիւններ եւ ղրկուած նամակներու օրինակները, իւրայատութիւններու մէջ հաւագուած են: Պաշտօնական բոլոր նամակները մեքենագրած եւ որպէս նախագահ ստորագրել է վերջ, նամակատուն յանձնած եմ, առանց ուշացումիւ:

#### ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյս Երիտասարդաց կազմակերպութեան փակաքով, Հոկտ. 4-ին, դասախոսութիւն մը տուած եմ, Սնգլ երէն լեզուով, նիւթ ունենալով " էյ. Սի. Վայ. Օի դերը եւ պարտականութիւնը Հայաստանեաց եկեղեցիէն պաթջակ ներս":

## ԵԿԵՂԵՑԻԱՅՍ ԹԵՐԹԻԿԸ ՍՀԱՄԱՐՁՈՒՄ

Պրիճը թիկի եւ շրջակայ քաղաքներու մեր անդամները եւ չայ ազգակիցները, եկեղեցւոյս գործունէութեանց, ձեռնարկներուն եւ համայնքային կեանքին մասին տեղեակ պահելու համար, միեւնոյն ժամանակ շատ եկեղեցի չեկողներուն հոգեւոր պատգամ մը հասցնելու փափաքով, ամէն ամիս կանոնաւորաբար հրատարակած եմ եկեղեցւոյս Սուրբ համբարձում լրատու թերթիկը, նկարազարդ, չայերէն եւ նկազարդ երէն լեզուներով։

Օգնական չունենալուս, թերթիկին խմբագրութիւնը, մեքենագրութիւնը, բազմագրութիւնը, ծալւելը, հասցէագրելը, կարելը, դրօֆմաթուղթերը բակցնելը եւ նամակատուն յանձնելը վրաս մնացած ըլլալով ես ըրած եմ եկեղեցւոյս կազմակերպութեանց պէտք եղած տպագրական գործերը եւ յայտարարութիւնները վիշտ սիրով ըրած եմ։

Մեր ազնիւ եւ առատաձեռն ժողովուրդն ալ, գնահատելով տարուած աշխատանքը, թէ նամակով եւ թէ ալ դրամական նուէրներով զօրավիգ կանգնած են թերթիկին եւ քաջալերած են մեզ։ Քաջալերական նամակներ եւ դրամական նուէրներ տակաւին կը շարունակուին հասնիլ։ Անցեալ տասը ամիսներուն թերթիկին անունով 187 տոլար նուէր եղած է, որը իր օրին յանձնուած է եկեղեցւոյս գանձապահին։

### ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԿԵՂԵՑԻԱՆ ՆԵՐՍ

Առաջին նորութիւնը այն եղավ, որ եկեղեցին ունեցաւ իր մնայուն հովիւը։ Ապա նորութիւններ եւ բարեբոյնութիւններ իրար յաջորդեցին։

Նուէր ունեցանք եկեղեցիին համար ինքնագործ տպագրական մեքենայ մը։

» » » » երկար գլ անով Անգլերէն գրամեքենայ մը։  
» » » 26 նոր սեղաններ։

» » սըֆին գետինը ծածկելու համարմեծ քանակութեամբ վայնը։ Եկեղեցւոյ երբորդ հարկի պատշգամը նորոգուեցաւ եւ ներկուեցաւ։ Քահանայական Պատարագի նոր զգեստ մը եւ սաղաւարտ մը կարուեցաւ։ Նուէր ստացանք 2,000 տոլար, եկեղեցւոյ եւ սըահին ներգին ներկի նորոգութեան համար։

### ԾՐԱԳԻՐՆԵՐ ՆՈՐ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ։

Հետեւեալ ծրագիրները ունինք մեր յաջորդ տարուան գործունէութեանց մաս կազմող եւ կը կարծենք թէ համայնքին հոգեւոր, ազգային կեանքին եւ եկեղեցւոյս նիւթական բարօրութեան եւ զօրացման օգտակար պիտի ըլլայ։

1.- Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւը աւելցնել։

2.- Յանձնախումբ կազմելով այցելել ել այն անդամներուն որոնք զանազան պատճառներով եկեղեցիին հեռացած են։

3.- Նամակատունէն հրամանագիր առնել, մեր թղթակցութիւնները աւելի աժան գինով մը կարենալ զրկելու եւ եկեղեցիին դրամ խնայելու համար։

4.- Եկեղեցւոյս բոլոր կազմակերպութեաց մասնակցութեամբ, տարեկան մէկ խոշոր ձեռնարկ մը հանդիսանալ կազմակերպել եւ նիւթական հասոյթ ապահովել, եկեղեցին նիւթապէս ամուր հիմերու վրայ դնելու համար։

5.- Անդամական եւ ընկերային ձեռնարկներու թիւը աւելցնել եւ ժողովուրդը աւելի յաճախ իրարու քով բերել, որպէսզի սէր եւ իրարհասկացողութիւնը իրականանայ։

6.- Ազգային երեք կարեւոր տօներու առթիւ վարդանանց, Ապրիլ 24-ի եւ Մշակութային օրուան, պատշաճ հանդիսութիւններ կազմակերպել։

7.- Աւելի զօրացնել մեր եկեղեցական ներկայ կազմակերպութիւնները։

8.- "Տէր եւ Տիկին" ներու Միութիւն մը կազմել, եկեղեցւոյ հովանիին ներքեւ։

Ասոնք եւ դեռ ուրիշ գործեր բոլորն ալ ի պայծառութիւն Հայց-Ս. Եկեղեցւոյ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն։

Զեր հոգեւոր հովիւը

Անդիմ միջ. Գևորգ Դեմիք

Սարգիս Քչնյ. Գաշեգնեան

Յուն. 25, 1964

Պրիճը բորթ, Քէննէթիքէթ